№—197 ԵՐԵՔՇԱԲԹԻ 29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակի եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію газеты «Мегу Айастанъ», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Hayastani» à Tiflis (Caucase).

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՍԱՆԵԻԶՈՐՈՐԴ ՏԱՐԻ

Խմբագրութեանս ուղղած Թէ՛ յօդուածները եւ Թէ՛ նամակներս պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Բաժանորդագրութեան գները

Ամբողջ տարի—10 ռուբլի։
Կէս տարի—5 ռուբլի։
Երեք ամիս—2 ռուբլի 50 կոպ.։
Մէկ ամիս—1 ռուբլի։
Առանձին համարներ 5 կոպ.։

Բաժանորդագրութիւնները ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահվերդեանի տաւիլիոնում։

Բաժանորդագրութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԵԻԱՆ
18 սեպտեմբերի.

(Թղթակցութիւն «Միտու Հայաստանի» լրագրի)

Շատ չէ անցել, որ մենք կարդացինք մի չարք յօդուածներ, ազգային պարբերական Թերթերի մէջ, մեր Երեւանի լաւ խաղացող կանանց վերաբերութեամբ։ «Մշակի» № 105-ի մէջ, պ. Բրժիկ Լեւոն Տիգրանեանցը իր յօդուածով պաշտպան է հանդիսանում յիշեալ կանանցը, օգտուելա համարելով այդ առակ խաղը այն տհաճակիցից, որ իրը լաւ ժողի առիթով մխիթարից մօտ յաճախ ժողովելով՝ նոքա ծանօթանում են, ընտելանում են ընկերական յարաբերութիւններին, հետեւաբար բարձրանում է նոցա մտաւոր զարգացումը։ Ցիշեալ յօդուածի մէջ պարոնը գովում է նրանց իրանց լաւ յատկութեանց համար և պախարակում է աննաստոր նախանձներով Երեւանի մի քանի այն անբարոյական երիտասարդներին, որոնք չանդգնում են լաւ խաղացող կանանց վերայ վայր ի վերոյ խօսել, և սպառնալից նամակներ գրել։ Թող նների ինձ մեր քաղաքային յարգելի բժիշկը այդ մասին իմ համեստ նկատողութիւնը յայտնել։

Ձմարիան ասած, չատ անախորժ էր այնպիսի մի նիւթի վերայ առանձին յօդուած կարդալ լրագրութեան մէջ, որ պիսին լաւագի խաղն է։ Մեր մէջ եղիլ գովասանւում է հայ կինը, միւս կողմից պախարակվում է նա։ Այդ յօդուածը մանաւանդ բոլորովին աւելորդ է թվում ինձ այն պատճառաւ, որ նա տիկինների պատկառելի խումբը աչխատում է պաշտպանել այնպիսի անբարոյական և փչացած երեխաների դէմ, որոց Թէ՛ բոլոր սպառնալիքը և Թէ՛ վայր ի վերոյ խօսակցութիւնը ոչ մի արժէք և դին չունի որևէ հասկացող մարդու աչքում։ Ուրեմն ինչ պարծանք է հայ կնոջ յինչել պաշտպանութիւնը։ Իսկ ինչ կը վերաբերի հայ կանանց մի քանի լաւ յատկութիւններին, պ. բժիշկը լիովին իրաւունք ունի և քաւապատիկլու, նրմանապես տ. Վ. Աղամալեանցի արած բարերարութիւնը օր. գպրոցի 700 ռ. նուիրելովը. Նա ինքն ըստինքեան արժան է առանձին յօդուածի, ի պայծառութիւն անուան, և ի խրախուսանք այլ կանանց։ Եթէ չեմ ձանձրացնի ընթերցողին, ես կ'աւելացնեմ իմ բոլոր կարծիքս, Թէ ինչ գաղափար ունեմ չոսոյի մասին։

Ընդհանրապէս այդ խաղը ինքըն ըստինքեան ոչ այնքան գեղի վնասակար է, որքան կարծվում է, և ոչ այնքան գովասանութեան արժանի։ Գաջալերել կանանց՝ աւելի ընդարձակել այդ գործը, սպասելով նրանից իրը Թէ բարոյական և մտաւորական զարգացում, այդ ես անկարելի է։ Վերջին տոլս գըրելուս ես մի քանի իօսք ես կամենում եմ ասել այդ առիթիւ «Մեղուի» մէջ տպաւած պ. Մ. Աթանասեանցի յօդուածի մասին։ Ես ոչ չատ մօտ եմ այդ ընկերութեանը և ոչ բոլորովին հեռու, կարծում եմ որ պարոնը սխալ է կազմել մի այդպիսի գաղափար յիշեալ կանանց վրայ և գովելի չէ, որ նա այն աստիճան սաորացրել է իր համաքաղաքացի հայ կանանցը, կարծելով Թէ այդ խաղը այդպիսի մեծ հարուած է տալիս նոցա։ Թող հաւատայ ինձ պարոնը, որ իր կարծած լաւ տանտիկինը, որ տանը նստած ամբողջ ամիսները լաւոս չէ խաղում, աւելի կեղտոտ է պահում, նորա՝ ամենավայ պատչարը հոտում է, նորա կարը և ձեռագործները լինում են անճաշակ, նորա զաւակները աւելի լաւ չեն կրթվում, քան վերոյիչեալ կանանցը։ Լաւոս խաղացողները գոնէ մեծ մասամբ առաջին և հարուստ դասակարգին պատկանելով՝ ապահոված են ամեն կերպով, նոցա ընտանեկան բոլոր գործերը ժամացոյցի պէս կանոնաւորված են Թէ մաքրութեամբ, Թէ հիւրասիրութեամբ և Թէ զաւակց դաստիարակութեամբ, և նորա կարծած ծոյլ ու լաւոսամոլ կանայքը, առաւօտը կարի մեքենայի առաջ նստած՝ մինչև երեկոյ՝ ստեղծում են այնպիսի գեղեցիկ ճաշակով նորաձև չրջազգեստներ, որ տեսնողները երբէք չէին հաւատալ, որ այդ 17 կօպէկանոց կտորից է կարուած, և այդ իսկ չրջազգեստը նոքա հագնում են ու դնում խաղալու։ Նոցանից չատերի ամուսինները իրանց կանանց 3 կամ 4 ժամվայ բացակայութեան ժամանակ նստում են տանը հըսկողութիւն անելու մինչև նոցա վերադարձը, որովհետև այդպիսիները հասկանում են, որ կինը ևս համահաւասար ընկեր է իր հետ, և Թէ նորան ևս հարկաւոր է հանգստութիւն, զուարճութիւն և մաքուր օդ ծծել, և վերջապէս ամենագեղատեսիլ չէ, որ կինն է ծնվածն նորանից յետոյ կինը տասնապատիկ աւելի է նսեմանում տանը, տղամարդը գնում է կլուբ, իսկ ինչ կը վերաբերի նոցա հագուստին՝ այդ մասին իմ կարծիքով, աւելորդ է խօսել անգամ, մենք բոլորս գիտենք, Թէ չատ սակաւ է պատահում, որ աղամարդը իր զրպանը առանց տագնապի համարելու, տասն անգամ ծանր ու Թեթև անելու մէկ կօպէկի իրաւունք տար մէկ քայլ փոխել իրանց ընտանեկան կեանքի մէջ։ Հանդիստ մըտածէք, ձեր կարծած տղամարդիկները այնքան բարի պատուղներ չեն, մանաւանդ մեր երևանցիները։ Թէ այսպէս և Թէ այնպէս, թող լաւոս խաղացող քոյրերը զարձեալ չարունակեն իրանց խաղը, եթէ այդքան սիրում են համարել այդ անմեղ թուանչանները, միայն Թէ միանան իմ նոր մտքի հետ—իրագործելու իմ մէջ յղացած վաղուցվայ միտքը։ Բնութիւնը ծնել է ինձ իմ դիտութիւնից, իմ նիւթական կարողութիւնից բարձր մտքերով, նա ինձ Թելադրում է ձգտել այնքան բարձր, որ ձեռքս չի հասնում, ուստի և սա դառնում է ինձ համար մի անվերջ մտատանջութեան նիւթ, որ ոչ մի եղրակացութեան և հետևանքի չէ կարողանում հասցնել ինձ։ Եւ արդարև գըրեթէ անկարելի կը լինի, քանի որ չեն միանում ինձ հետ մի քանի բանիմաց կանայք։ Ես դիմում եմ մեր Երևանի նոյն իսկ լաւոս խաղացող կանանց, դիմում եմ նոցա, ինչպէս ասացի, իրրև աւելի ապահովված և զարգացած դասակարգին իմ մի համեստ առաջարկութեամբ։

Արդէն ժամանակը հասել է գործելու, ժամանակ է պարտաճանաչութեան գաղափարով յառաջ գնալու, իմ համաքաղաքացի քոյրեր, ժամանակ է, որ մեր փոզերի մի մասով մեր անունը երևան աւաւոր կացուցանենք չատերի յիշողութեան մէջ, միանանք ձեռք բերել մեզ համար մի աննշան մի քանի ռուբլինոով այն, ինչ որ մեր անունը, ինչ որ մեզ՝ կենդանի կը յիշէ մինչև անգամ մեզանից յետոյ . . . Շուռ տանք աչքներս այս ու այն կողմը. մինչ ամեն տեղ գործողների ժրաժիր խմբեր չենք տեսնիլ։ Ա՛հա՛նչ դնենք, և մինչ «պարտքն է երդ վարելդ» սարսափեցնող ու զգաստացնող ձայներ չենք լսի, այդ՝ հայրենեայց ձայնն է, և մի ձայն, որ հինգ-հարիւր տարուան փլատակների տակից է դուրս թռչում, մի ձայն, որ գերեզմաններից է դուրս սողում, անլսելի կը մնայ, երբ մեր անկչների խլացած կը լինին, երբ սրտի տեղ ապառաժ կրած կը լինենք մեր կրծքի տակ, չէ, քոյրերդ իմ համաքաղաքացի, կենդանի մեռածներ չը լինենք, սոսկանք այդ հրէշաւոր յատկութիւնից։ Ժամանակը և բարեպատեհ արդի հանգամանքը լաւ են արել մեր առաջ, «անմահանուն» ժառանգելու ասպարէզը—միանանք մեր սերունդը «լուսոյ ժառանգ» անելու մեծ գործում, մեր հայրենիքը «լոյս» է խնդրում, խեղդուեց խաւարի սէջ, լոյս, լոյս տանք նորան... մի քոյր է, որ աղերսում է ձեզ, մի ձայն, որ թռչում է դէպի ձեր ականջը ձեր ողին ու սիրտը չարժելու համար. մի՛Թէ մենք խաղալիքներին խաղալիքներ դառնալու համար ենք ծնած. երբէք. այդքան չ'սաորացնենք մեր կոչումը. մեր դերը բարձր է և վսեմ. կատարենք, իմ քոյրեր, դէմ կատարել աչխատանք . . . սորանով մենք կատարած կը լինենք մեր պարտքը, անմահացրած մեր անունը և կը նսեմացնենք, երևանցի իմ քոյրեր, Ցփխիել այն կանանցը, որ լոզ են տալիս մլլիոնների ու ոսկու մէջ . . . մանր ու բաժին հանենք մեր ունեցածից, ընկերութիւն կազմենք, հայրենացը «լոյս» բաչխենք . . . դարձնենք ուչերս այն կողմը, որտեղից ձայներ են Թռչում մեր ականջներին. այնտեղ են մեր արիւնակիցները, այնտեղ են մեր արմատները, այնտեղ է թանձրացած խաւարը . . . Մինչդեռ մենք ապրում ենք խաղալ և երջանիկ, մեր ուսուց բարեկենդամ տերութեան հովանոց տակ, մինչդեռ մենք տէր ենք մեր ունեցական կալուածներին, մենք ապահով ենք մեր զաւակների բարօրութեան մասին, այդ ամենի հակառակն է Ցանկա-Հայաստանի նորա նիւթական միջոցները և նա չէ կարողանում մտնել գիտութիւններով լի համալսարան, ես ինչ։ Ա՛յսպիսի նեղ միջոցում վաւավում են նորա սրտի մէջ ուսման սիրոյ կայծերը, գաղար չեն տալիս, նա դիմում է գանազան օգնութեան փորձերի, բայց չէ յաջողվում Թէ՛ նորա ուսման փափաքով վաւված այդ ժամանակ գանվում են բարերարներ, որոնք օգնում են նորան ձեռքից բռնելով անցնել այս նեղ չաւղից այն բաղդաւորութեան չէմքից, և հասցնելու իր սպասած լայն ասպարիզին, ա՛հ, քանի գովասանութեան կարօտ է այդպիսի մի բարերարը, Տարկաւոր է մի հարուստ գիտնական բանաստեղծ նրա մեծ գործը յայտարարելու . . . Ա՛հա այսպիսի գործեր կատարող մի ընկերութիւն եմ առաջարկում հիմնել մեր քաղաքում։

Առաջարկում եմ իմ սնայական տունս այս նպատակի համար ժողովներ կազմելու տեղ. ժողովվենք, ուսումնասիրենք առաջարկութիւնս, կանոններ խմբագրենք, հաստատութեան առաջարկենք, կարեւոր պաչտօնները որոչենք, պաչտօնատարներ ընտրենք, եւ՝ սիրտ սրտի, աջ աջի տուած գործի կենանք։ Մեր վախիլ, այս իմ առաջարկութիւնս հաղարներ ու մլլիոններ չէ պահանջում ձեղանից, տասնաւորներն էլ բաւական է առայժմ մեր իրաքանչիւր մէկից։ Մինչև նոր կոչ վստահութեամբ հաւատանք մեր անդին կեանքը մեր որդեծնութեան նեղ ճգնաժամի մէջ ազէտ ու գեհենիկ մանկաբարձներին, որ ոչ մի հասկացողութիւն չ'ունին այդ մասին։ Հաւատացնում եմ, որ մեր հայ կանայք չա-

տերը մէայն Աստուծոյ խնամքով են ծնում, մեր տատմէրները ծնդկանի մօտ նոյնն են, ինչ որ մի կատր քար։ Եւ թէ մեր ծնողից յետոյ որքան տկարութիւն է տեսնվում, չենց այդ տատմէրների տուած հարուածներին պէտք է վերագրել։ Սակայն մենք տակաւին չենք մոռացել և չենք դադարեցնել ուսեալ մանկաբարձին անուս տատմէրից։ Ահա և մի կէտ, որ արժան է քննադատութեանը մեր ազգայ ընկերութեան։

- Խնդարհարար խնդրեմ «Մեղու Հայաստանի» ազդօգուտ լրագրի խմբագրութիւնից հիրընկալնել իմ այս յօդուածը ձեր լրագրի մերձակայ համարներից մինի մէջ, որ սրտիս իղձերը պատկերացնելով Երեանի ձեր ընթերցող տիկինների առաջ՝ կարողանամ չուտով գործ սկսել, որ և կը ձեամ չնորհապարտ՝

Սբբոհի Խաչատրեանց։

Կ. ՊՕԼԻՍ

3 սեպտեմբերի։

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Յարգոյ խմբագիր։ Նկատելով, որ գաղղիարէն լեզուաւ հրատարակեալ լրագրէ մը այն տանն ի՛օգտի ազգը, երը զայն ընդհերցողք կը լինին ոչ միայն հայք, այլ նամանաւանդ օտարազգիք, որոց կամքն ձանչցընել մեր դաւերը և օրինցն օգուտ կ՚առնկալեմք, կ՚առաջարկեմ, որ յօդուտ «Journal d'Orient» լրագրի հանդանակեալ նուիրատուութեանց դուռարով այդ լրագրին հարիւրաւոր օրինակներու բաժանորդագրութիւնք և ղրուներ զայնս Նուսական, Գաղղիական, Անգլիական, Իտալական և Գերմանական հասարակաց ընթերցանութեանց, երեսփոխանաց, գրատանց, պանդոկներու, սրճարանեաց և այլն և այլն։

Կարելի է, այդ լրագրոյ հայասէր խմբագրապետը բաժանորդագնոյ վըճարայ պէղջ մ՚ընելով դիւրացնէ մեր այս ձեռնարկը, և ազգայինք ալ փութան ձեռնտու լինել այդ ազգասպասարկեան օտարախօս թերթի բաղմաքանակ տարածմանը։

Այս առթիւ կը յայտարարեմ նաև որ ժամանակէ մը ի վեր ազգասիրաց լրագրոյ ձրի դրուատեաց արժանացող պր. Տիւլօրիէ պարզ առաջնորդութիւն մ՚ըրած է ասելով թէ «ինքը առաջարկեր է պղտայն երեսփոխանական ժողովոյ և ներքս Արբազան պատրաստ՝ որ գաղթարէնը լեզուաւ լրագիր մը հրատարակէ, իսկ ստացած չեն օժանդակեր»։ Պ. Տիւլօրիէի կողմանէ բնաւ այսպիսի հրատարակութեան մը համար առաջարկութիւն չէ եղած. ես կարող եմ պաշտօնական դրութիւններով հաստատել զայս, թող պր. Տիւլօրիէ հափառակն ապացուցանէ։ Թողունք թէ սա ինքին անկարող է այսօրինակ մի ձեռնարկի թերթի խմբագրութեան։

Հիւրընկալեցէք ներկայս, յարգելի խմբագիր, ձեր պատուական լրագրի մի անկիւնը, վստահոյց կանխաւ շնորհակալիք

Մնամ

Սբբոհ Ոսկեչէկեանց։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինդշաբթի, սեպտեմբերի 24-ին «Բաղդադի իշխանուհուն» տեսանք մեր բեմի վերայ։ Դիւանաւորոյ զբաղաքն է, ուրեմն էֆֆեկտներ և երեխայք անպատճառ պիտի լինին բեմի վերայ, բայց և այնպէս—շատ բեմական է և խելացի։ Դերերը կատարեցան բաժանված էին. «Իսինէտա (օֆոթրիկ առիւծ)» ս. Հրաչեայ, Ջան—պ. Ադամեան, Նուրվադի—պ. Մնակեան։

Հարուստ կին մի շքեղութեան և շռայլութեան մէջ մեծացած, պատ-ախարակված, ապրած և ամուսնացած, մեծ օժիտով (Իսինէտա) իր ամուսնոյ հետ (Ջան) մնակեանում է։ Քաղաքն մկլիոնի տէր (Նուրվադի), որ վաղուց ի վեր սիրում է Իսինէտային, օգուտ քաղելով այդ դրութիւնից, առաջարկում է նորան իր ամբողջ կարողութիւնը սիրահարութեան պայմանով։ Իսինէտա մերժում է, բայց յետոյ ամուսնի ձանն իմանում է, որ Նուրվադի առանց նորա դիտութեան վճարել է արդէն անհրաժեշտ ամուսինների պարտքերը և ազատել է նոցա պարտատէրհակերը, որի պատճառով ձանը իրան անպատուած համարելով, որ «իր գինջ սէրը փողով գնուած է» և նախանձի բարկութիւնից կատաղած յարձակվում է գնջ վերայ և առաջարկում է նորան դուրս գնալ տնից։ Սիրը յայտնում է թէ տունը նորանն է։ Բայց ամուսնու կասկածը և վերաւորանքը սաիպում է Իսինէտային ընդունել Նուրվադիի առաջարկութիւնը, որին չէ սիրել և չէ սիրում և շահվել նորա հարստութիւնից։ Իսինէտա գնում է Նուրվադիի նորան ընծայած տունը, և այստէղ ձանը ստիկաններով բըռնում է իր գնջ Նուրվադիի հետ։ Իսինէտա, դարձեալ անարգված լինելով ամուսնու այդ վարմունքից պիտանի այնպիսի անկարդ ձև է տալիս իրան, որ պիտի վկայէ նորա անմեղութեանը։ Ծտասիկանութիւնը արձանագրութիւն է կազմում, ուր մուծանում են Իսինէտի խոստովանութիւնը իր Նուրվադիի հետ իբր ունեցած սիրահարութեան մասին։ Իսինէտա յայտնում է նորան ընծայած հարստութեան մասին և միլիոն ոսկին թափում է յատակի վերայ իբրև նշան հարստութեան։ Իսինէտա և Նուրվադին վճռում են հեռանալ փարիզից, Իսինէտա գալիս է իր տուն գնալու պատրաստութիւն տեսնելու համար, որին հետևում է և Նուրվադին։ Նուրվադին շատախնդում է նորան շռայլ գնալու, բայց յանկարծ ներս է վազում Իսինէտի որդին, որ չը թողնէ մորը հեռանալու. իսկ Նուրվադին երեխային յատակի վերայ վայր է դնում։ Այդ վայրկենում Իսինէտի մէջ զարթնում է մայրական զգացմունքը և նորա վրայ է նետվում Նուրվադիի վերայ և տալով նորան ուժգին հարուած ձայնում է. «Ես Կ՚ատանամ քեզ» և գրկում է երեխային արտասուալից համբոյրներով։ Այդ րոպէին ներս է մտնում նորա ամուսին ձանը, տեսնում է սրատեսիլ տեսարանը, համոզվում է գնջ անմեղութեան մէջ և կոյանում է հաշտութիւն և խաղաղութիւն։

Ահա պիէսայի ընդհանուր պատնակութիւնը։ Պէտք է նախատել հեղինակին, որ Իսինէտի գերը հոգեբանական և բնական կէտից շատ թերի է և անզարդացած։ Հեղինակը թողնում է հանդիսականներին շատ բան դուշակելու և իրանց կողմանէ լրացնելու։ Ուսոի և այդպիսի անկատար գերի կատարումն չափազանց գժուարութիւններ կը հանդիսի դերասանուհու կողմից։ Այդ պատճառով ս. Հրաչեայի խաղը այս անգամ առանձին և յատկանիշ արժանաւորութիւններ ունեցաւ, լցացնելով հեղինակի պակասութիւնները։ Առաջին անգամն է, և փառք Աստուծոյ, որ մեր բեմի վերայ խօսվեցաւ բնական, մարդկային ձևով, առանց թատերական էֆֆեկտների, այնպէս կը խօսի մի սնանկացած ֆրանսիացի կոմսուհի, մի վայրկեան չը մոռանալով իր անցեալը, իր ծագումը և իր սովորութիւնը։ Երկար բեպկեհաներ Ռիշարի և Ջանի հետ (1 գործողութիւն) գործերի դրութեան և աւանդութեանց մասին, որ կենդանի կերպով կատարեց ս. Հրաչեան, այնքան բնական էր, խնամատարից և խելացի, որ մենք պատրաստ էինք մոռանալ, թէ այդ բոլորը բեմի վերայ է կատարվում։ Կային րոպէներ, երը ժողովուրդը երեսակայում էր իրան մի պահլեճի մէջ, իր բարեկամի տանը։ Սա է այն բանը, որ պ. Գ. Ա. անուանում է բեալականութիւն հասցրած մինչև գեղարուեստութեան բնական սահմանը։ Սա իսկ եղել է մեր բեմի մեծ պակասութիւնը, նորա հիւանդութիւնը։ Կ՚ասենք, ս. Հրաչեայի խաղը այդ ապերախտ գերի մէջ, այնքան նուրբ էր, եթէ կարելի է այսպէս ասել, այնքան բարակ մտածած, որ նորա ըմբռնելու համար մեծ ուշադրութիւն էր հարկաւոր և բայի այդ նոյն իսկ պիէսան ուսումնասիրել էր պէտք։ Դորա վերայ մենք մեր պարտքը համարեցինք գարձնել առանձին ուշադրութիւն, որովհետև դա մի նոր, անսովոր ուղղութիւն է, որ տալիս է ս. Հրաչեան մեր բեմին և, կը համարձակիմ ասել, խրատում է նորան։ Մեր կարծիքով առաջին դործողութեան վերջը մեռաւ, և հեղինակը այնտեղ կորցրեց իր նպատակը, որովհետև պ. Ադամեանը իր գնջ հետ ունեցած խոովութիւնը անցկացրեց մի սորատիւլի թատերական օրագրի մէջ, որով կործանեց ամբողջ գործողութեան գաղափարը և վիպը, մոռանալով որ նորա հայ հոգեանքին պատասխանելու համար Իսինէտը արհամարհական ծիծաղով պիտի վերջացներ գործողութիւնը։ Որոտումն ծափահարութեան պատճառ եղաւ, և դերասանուհին 5—10 րոպէ ժպիտը երեսին պէտք է կանգներ իբրև արձան մինչև ժողովուրդը հանդարտվեր, որ նա կարողանար ծիծաղել և վարագոյրը իջնէր։ Սա մի մեծ անախորժութիւն էր, որ չէր վայել պ. Ադամեանի տաղանդին։ Անկարելի է էֆֆեկտի համար կործանել իր ընկերոջ խաղը։ Բայի այդ, այդ որոտումն սխալ էր, նա չի պիտի լինի, որովհետև նա անհեթեթութիւն է ամեսնու յարաբերութեան կէտից նայելով, որ արդէն ժողովրդին յայտնի է։ Իսինէտի անսիրտ վերաբերութիւնը և մի կերպ ապրելութիւնը, որ նա ունէ իր ամուսնու վերայ, նորանից ամէն բանի մէջ կախում ունեցող ամուսնու վերայ,—այդ բոլորովին գատարկացնում է որոտմանց կարևորութիւնը։ Անկիզ ասեմ, հոգով ցաւեցի այդ անբնականութեան պատճառաւ, բայց կը յուսանք, որ դա մի պատահական անցք էր, և առաւել, որ ամբողջ երեք գործողութիւնը այդպիսի հետաքրքրութեան իրաւունք մեզ չէ տալիս։ Մեկ մի անարգված, անպատճառ ամենայն դիմամբ է ոսոխ. կանութեան, փառասիրանի և գաղի ազատակ որպես ասանալու համար այնպիսի գնջից, ինչպիսի է Իսինէտայ, նա, ամենայնը, հեղինակի կողմից չէ կարող առանալ իրաւունք այնպիսի տեսարանի համար, ինչպիսի սա առաջին գործողութեան վերջն է։ Սակայն յետոյ սխալանքը մի գեղեցիկ տեսարան մեզ տուեց։ Մնացեալ տեղերն նա իր պերն յաջող կատարեց։

Երկրորդ գործողութիւնը շատ յաջող անցաւ։ Տ. Հրաչեայի բանակցութիւնը ոսոխական հետ արձանագրութիւնը կազմելու ժամանակը, իւրեան պատճառելու և մնալու, նամանաւանդ և ոսկին ցրուելու վայրկեանում այնքան գեղեցիկ էր, որքան սովորաբար նա լինում է այդպիսի դրամատիկական դերերում։

Երրորդ գործողութիւնը անցաւ ըստ սովորականին, ինչպէս անցնում են միջօրամատիկական տեսարանները, արատուք և հաշտութիւն։ Պ. Մըռնակեանի մասին կ՚ասենք, որ այս տեղ նամանաւանդ տեղից մի կատարեալ նախատիպ, ինքնուրոյն և գեղարի գաղափարին համաձայն մի անձնաւորութիւն։

Գալով ժողովրդին, մենք միանգամայն պիտի յայտնենք մեր գարմանքն և նախատինքը։ Անտանելի է տեսնել մեր ժողովրդի կոմմանէ այդքան անտարբերութիւն դէպի ազգային թատրոնը։ Չը գիտենք, թէ Տփխիսի ժողովուրդն ինչ բան է և ինչ է նորա պահանջը։ Այդպիսի գերասանական խումբ, ինչպիսի է հայկականը՝ Տփխիս քաղաքի համար մի անսպասելի գիւտ է, որ նա չէ ունեցել և հազիւ թէ կարողանայ ունենալ ապագայում։ Ազգային բեմը ծաղկեցնելու համար պարծ են գրվում այն ամէնը, ինչ որ նպատակաւոր է և կարելին է։ Ջեն խնայում դորա համար, ո՛չ աշխատանը, ո՛չ ապրուստը և ո՛չ գրամ, ունենալով երբեմն ջանքեր և անյաջողութիւններ։ Նեղում ենք, որ ամենը իրանց լսակ գատաստիքը յայտնեն, թո՛ղ խօսեն, բայց թող և պահպանեն թատրոնը։ Այն ինչ, որ մենք ունինք հայ անունով, եթէ օտարները ունենային, մենք հայերս, ձեռներիս վերայ մինչև երկինքը կը բարձրացնէինք և մեր ազգասիրութիւնը խայտառակութեան կը հասցնէինք։ Իսկ մեր ազգային երեւոյթները թողնում ենք անտարբերութեան վիճակին, որով հետև նա մի համեստ անուն ունէ—հայրենի է։

Բայց չը պիտի մոռանալ, որ ով որ իր բնաւորութեան և իրան չի յարգիլ, դէպի ինքը յարգանք պահանջելու իրաւունք էլ չի ունենալ։

Թարգմանութիւնն պատկանում է պ. Ա. Յովհաննիսեանին։ Ընթերց-

գու, դարձուածները դիւրին ըմբռնելի,—ահա թարգմանու թեան յատկութիւնը:

X.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱ

Սեպտեմբերի 12-ին նախագահ Գարֆիլդի մարմինը կրող չոգեկառքը գնացքը կամաց մօտենալ Ելեվելենդի կայարանին: Շոգեկառքը գեղեցիկ զուգած էր սև և ոսկեհատով: բոլոր վագոնները ծածկել էին սև մահուդով: Առաջինը շոգեկառքի վերայ դրած էր Գարֆիլդի մեծ պատկերը ամերիկական դրօշակով: Պաշտօնեաներու բոլոր անդամները վագոններից դուրս գալով սպասում էին բայց ղնդիններով մինչև որ չանցաւ իւր կառքը նստելու տիկին Գարֆիլդը, որը իւր որդու կուան վերայ թեքուած և կոդքին պաշտօնեայ Բլէնի հետ դուրս եկաւ վագոնից: Տասներկու ռմբաձիգ գինուորներ բարձրացրին ուսերի վերայ դագաղը և դրին կառքի մէջ: Զորս նեգրներ բերին սգաւոր կառքի ձիաների տանձերից և այդ ոսկեայ յորգարկուրութիւնը սկսվեց: Տասնվեց տարի սրանից առաջ նոյն իսկ այս նեգրները հէնց այդ ճանապարհի վերայով տարին ազատ կառքը Լինկօլնի մարմինը վերան դրած: Ինչ ամրողջ կանգնած էր ամրողջ ճանապարհի վերայ, որի վերայ պիտք է անցնէր յօղարկաւորութիւնը: Դագաղի և ուրիշ գնում էին իրենց դրօշակով 100 գինուորներ այն գնդից, որին հրամայել էր Գարֆիլդը: Սրանք ամենը հին ծառայածներն էին, որոնք նրա առաջնորդութեան տակ ծառայել էին: Յօղարկաւորութեան հետևում էին երկու շարք կառքեր պաշտօնէութեան և կոնգրէսի անդամներով: Բոլոր վագոններին սպ էին հագցրել և գրեթէ ամեն սլաններին վերայ կախած էին Գարֆիլդի պատկերը: Խոր լռութիւնը, որը կանգարվում էր միայն յօղարկաւորութեան զանգակների ձայներով, տիրում էր անթիւ ամրոխի վերայ:

Հասնելով քաղաքային գլխաւոր հրապարակը յօղարկաւորութիւնը կանգնեց և դագաղը դրուեցաւ մի բարձր կատաֆալկի վերայ, որի վերայ բարձրացած էր մի ահագին մեծութեամբ բազմախին, որը շքեղ զարդարած էր: կատաֆալկի երկու կողմը գեղեցիկ կերպով շարուած էին ծաղիկների կոյտեր, իսկ կատաֆալկը թաղուած էր ծաղիկների միջէ: Այս անթիւ ծաղիկների միջից բարձրանում էր սպիտակ դագաղը մի պսակով Վիկտորիա թագուհուց զևի կողմի զրած, իսկ ոտքերի կողմը ծածկած էր կաղնե ճիւներով: Դագաղի վերայ զրած էր Գարֆիլդի պատկերը, որովհետև վճռուած էր որ նրա երեսը բաց չմնայ: Գիշերը ամբողջ հրապարակը լուսաւորուած էր էլէքտրական լոյսով և կատաֆալկը պազպազով կարելի էր հեռու փողոցներից տեսնել: Գարֆիլդի գերեզմանը դանվում էր Կլեվելենդեան արուարձանի ամենաբարձր տեղումը, որի ներքևումը տարածվում են կուլ լիճեր, իսկ աւելի հեռու երևում են Երիեան լիճը, Հայրումի դպրոցը և տունը, որտեղ անցուցել է Գարֆիլդը իւր երիտասարդութիւնը: Հանդուցեալ նախագահի հայրը և միւս ազգականները նոյնպէս ակիւ են կլեվելենդ, և մօր ցաւը նոյնպէս մեծ է, որով նրա մօտակայ մահը կարելի է նախատեսել:

Վաշինգտոնից կլեվելենդ եկող գնացքը, որը բերում էր մամուլի ներկայացուցիչներին յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուելու համար, երկաթէ գծից դուրս է պրծել և եօթը մարդ սպանուել են: Գարֆիլդի ընտանիքի օգտին ստորագրութիւնը հասել է 310,000 դոլարի:

ԱՒՍՏՐԻԱ

Արդէն յայտնի է, որ Աւգուստոսում էմիր Աբդուրահմանի և սրա վասնդաւոր հակառակորդի Եյուբ-խանի մէջ պատերազմը էր ծագել և այս վերջինը յաղթուել էր: «Times» անգլիական թերթի Գիւլհոնից ստացած մի հեռագիրը այսպէս է նկարագրում այդ պատերազմը: Առաջին կարգումը Եյուբը շարել էր իւր Գանդահարի գունդերը, նրանց հետևից զազերին թուով 10,000 մարդ, իսկ պահեստի համար երկու կարուելան գունդեր, որոնք փախել էին էմիրից և իւր կողմն էին անցել, երրորդը այն զնդից երից կարգած էր պնչարի մօտ: Կռիւը շարունակուեցաւ երեք ժամ առանց հետևանքի, բայց անապատ էմիրի կարուելան գունդերը կրակ արձակելին զօրքի եղբիցը զանգատ հարցնելի և զազերի հետից, որոնք իրենց առջևը կանգնած էին: Այս զաւաճանութիւնը գործը վճռեց: Գազերը և զանդահարցիները փախան, իսկ զաւաճանները կրկին զարձան էմիրի կողմը: վրանները և պաշարը, 14 թնդանօթներ ընկան յաղթողների ձեռքը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական մի քանի արքունիքներ հետևելով Վիկտորիա թագուհուն նշանակել են մի չափաւոր սուգ արքունիքներում նախագահ Գարֆիլդի մահուան համար:

—

Ֆրանսիացիները կամենում են իրենց զօրքերը մացնել Թունիս, իսկ Թունիսի բէյը ընդդիմանում է. իսկ Ֆրանսիացիները Թունիսի հետ կապած նոր պայմանագրի հիմանց վերայ կարծում են, որ իրաւունք ունին գրաւելու Թունիսում ցանկացած տեղերը: Թունիսի զուաւնները սպառնում են ամրոխիններին պայթեցնելու, եթէ ֆրանսիացի զինուորներին թոյլ տրուի մտնելու այստեղ:

—

Լուի-Բլանը ձախակողմեանների ժողովի մէջ կարդաց մի մանիֆէստ, որով այդ խումբը դիմում է ֆրանսիական ժողովրդին: Այդ մանիֆէստում ասուած է, որ կառավարութիւնը սխալ տեղեկութիւններ է հաղորդում Թունիսեան դործերի մասին, և թէ պատերազմական պաշտօնեայի կարգազրութեամբը անկանոն փողեր են ծախսուել: Նոյնպէս պահանջում է, որ օրէնսդիր ժողովները բացուին և նոյնպէս զատապարտում է Ֆէրլ-Ֆէլըի առած պատասխանը ծայրահեղ ձախակողմեաններին (որոնք գնացել էին խնդրելու, որ պատգամաւորների ժողովը բացուի, բայց Ֆէրլ-Ֆէլըին մերժել էր այդ առաջարկութիւնը): Այդ մանիֆէստում Ֆրանսիայի այժմեան դրութիւնը կոչվում է «իրապէս հակասահմանադրական» և ընդհակառակ Ֆրանսիայի և հասարակապետութեան չահերին: Ժողովը ընդունեց այդ մանիֆէստը և հիմա դա տպուած է բոլոր արմատական լրագրներում—թունիսից ստացած լուրերը ախորժելի չեն. ապստամբութեան հետ միացել է և Թունիսեան ցեղերից վերջինը, որը մինչև հիմա իրեն հանդարտ էր պահել: Երկիւղ կայ, որ բէյի եղբայրը, Ալի-բէյը կ'անցնի ապստամբների կողմը իւր բոլոր զօրքովը և կ'անցնի նրանց գլուխը: կայրուանի սուրբ քաղաքը պաշտպանում են 50,000 արաբացիներ, որոնց մէջում և 20,000 զրուձի:

—

Պարնէլլը 14-ին սեպտեմբերի յետ դարձաւ Դուբլին: Թէպէտև դիչեր էր, երկաթուղու կայարանի առջև հաւաքվել էին 20,000 հոգի երաժշտութիւնով, դրօշակներով և վառած լապտերներով որոնք հանդիսաւոր կերպով ընդունեցին «հողային լիգայի» առաջնորդին: Ամբոխը ուղեկցեց նրան լիգայի ժողովատեղին, որտեղ նրան մատուցին մի ադրէս, Պարնէլլը պատասխանեց մի ճառով, որի մէջ նա խօսեց Իրլանդիայի օրէնսդրական անկախութեան օգտին:

ՄԵՂՈՒ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25-ին սեպտեմբերի: «Կառավարչական Համբաւաբերը» հաղորդում է, որ ելևմտից նախարարութեան տանը արքունի կալուածոց և ելևմտից նախարարների ներկայութեամբ բացուած է խորհուրդ զէմքի մասնագէտների նիրքին զործոց նախարարի ձառով, որ ասաց. թէ թագաւորի կամքով ներկայ տարուայ մէջ երկրորդ անգամ զէմստվոյի հմուտ անձինք հրաւիրվում են, որ ամենից կենսական հարցերը չը վճռվին առանց լսելու տեղական գործակատարների կարծիքը, որոնք մօտիկ ծանօթ են գործերի իսկական դրութեան հետ. սրանից յետ նախարարը, մատնացոյց լինելով երկու հարցերի հրաւիրեան վերայ, ասաց. ձեզանից նորանք, որոնք ոչ առաջին անգամն են հրաւիրված, ամենից լաւ կը բացատրեն, որ դուք չ'ունիք պատճառ դժուարանալու ձեր կարծիքը պարզապէս յայտնելու համար: Ցետոյ նախարարը ցոյց տալով պատրաստից կարդը ասաց. ձեր աշխատանքը վերջանալուց յետ, կը նշանակվի նախարարների խորհուրդ և ես կը հաղորդեմ ձեզ մեր լուրջ հայեցուածքը, թէ ինչ կը գանենք յարմար և ինչ անյարմար ձեր առաջարկութեանց մէջ, յետոյ էլի մի անգամ կը քննենք խնդիրն մինչև, և որոշուին, որ մենք կ'անենք, կը ներկայացնվի արքունի խորհրդարանին և կայսեր: Թող նա ծառայի յօգուտ մեր սիրելի Ռուսաստանին: Արքունի կալուածոց և ելևմտից նախարարների ձառերից յետ նախարարների (մանուդէաների) ժողովն առիներ անդամի պ. Գօրդէնդօյի նախագահութեամբ որոշեց քննել երկու հարցերն էլ ըստ էութեան ամրողջ կազմակերպութեամբ: Ժողովը նախագահ ընտրեց իշխան Ա. Ա. Շչերբատովին և նորա օդնական Ն. Ա. վահանովին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27-ին սեպտ.: Էքսպէրտների նիստերում 24-ին, 25-ին և 26-ին սեպտեմբերի վճռել են միայն երկու հարցեր, այն է հասարակական պինտների կազմուածքն և պինտների թուի սահմանափակումն — երկու հարցերն էլ վճռել են դրականապէս: «Նօվոյէ վրեմեան» հաղորդում է. Այսօր վաղարշապ գնում է օրէր-պրօկուրօր Գօրբէդնօսցովը. այսօր սպասում են պետական Օրլովի գալուստեան:

ՌԻԳԻՆԱԿ, 26-ին սեպտեմբերի: Նաւահանգիստը բացվել է:

«Պօրեպօկ» լրագիրը հաղորդում է. կարմիր խաչը հրաժարվում է օդնելու հասարակական թշուառութեանց ժամանակ:

«Պառավարչական Համբաւաբերը» հաղորդում է. բարձրացոյն հրամայած է սարաձիլ նոր 5% բանկային տոմսեր հարիւր միլիոն ռուբլու. տոմսերին արուած են նոյն իրաւունքներն և արտօնութիւնները, որ ունին առաջին փոխառութեան 5%-անոց տոմսակները. սկսած 28-ից սեպտեմբերի արքունի բանկում, գրասենեակներում և բաժանութիւններում կ'սկսվի վաճառուիլն 92 ո. 25 կօպէկով, 100, 500, 1000, 5000, ռուբլու նոց տոմսակների: վճարումն կը լինի հօթն որոշեալ ժամանակներում. վերջինն է առաջիկայ ապրիլին: Սեպտեմբերի 15-ի հրովարտակով պատուիրած է թիֆլիզի գինուորական գիմնազիօնում 225-ի փոխարէն 275 ձրիաթոշակ աշակերտ ուներու: Սեպտեմբերի 25-ի հրովարտակով չնորհվում է պնչպատ կուլբերդին վաղիմերի չքանչանը երրորդ աստիճանի:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 23-ին Լազարեան ճեմարանի աշակերտները ճոխ տուին Օրթաճալասում, պ. բժ. վարդանեանցի այգիում մեծապատիւ պ. Մ. Ց. էմինին. Մօտ քառասուն հոգի ներկայ էին, որոնք գանազան ժամանակ ճեմարանի աշակերտ էին եղած և մեծ մասամբ մեծ. էմինի աշակերտած. Եղան զանազան ճառախօսութիւններ, որոնք մեծ մասամբ արտայայտութիւնք էին երախտագիտութեան զէպի իրանց ուսուցիչն ու զաստիարակը. Ձայը վերջացաւ նրանով, որ ստորագրութիւն բացվեցաւ մի օրգնդուհի պահելու համար անդոյս ս. Գայիանեան օրիորդաց միջնակարգ ուսումնարանում մեծ. Մ. Ց. էմինի:

Մեծ. էմինը չատ գոհ մնաց և զգածուած իրան բարեկամների խօսքերից չնորհակալութիւն արաւ և գոհունակութիւն և ուրախութիւն յայտնեց նորա համար, որ Լազարեան ճեմարանի'սաները վերջին 30 տարուան ընթացքում նչանաւոր քայլեր են անել տուել հայերին ազգայնութեան դպացմունքների և հայախօսութեան մէջ, և յիշեց իբրև ապացոյց ս. Գայիանեան և այլ դպրոցները ու հայ մամուլն, որոնք հայութեան լաւ և երջանիկ ապագայ են խոստանում:

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՒԱՏԱՐԻ ԶՈՐԱԲԱՇԻ Ս. ԳԷՈՐԳ եկեղեցու ծրխական դպրոցը սեպտեմբերի 1-ից բացուեցաւ. ընդունվում են 7—10 տարեկան մանուկներ: Դպրոցը այժմ տեղափոխուած է Բեզլեարօվկի փողոցի վերայ պ. Բաղրամովի (այժմ Լազինեանի) տանը, № 15.

Դպրոցի Վատիճեանց.
6—10

Պատիւ ունիմ յայտնելու, որ այսուհետև լինելով Բագվում, ընդունում եմ ամենայն տեսակ **ԿՕՄԻՍԱԿԱՆ** յանձնարարութիւններ կատարելու:

Հասցէ՝ Въ Баку. Въ конторѣ братьевъ Бегляровыхъ. Апѣлю Давидовичу Апресянцу.

Խնդրում եմ նաև նրանց, որոնց մօտ մնացել են մեր Հրատարակութեան «**ԽԱՉԻՔԻ**» բաժանորդական **ա պ ա ռ ի կ ն ե ր**, կամ վաճառած գրքերի **փ ո ղ ե ր՝** ուղարկել մեզ. կամ շուշի պ. Յակովբ Մուսայէլեանցին:

Կոմիսիոներ Աբէլ Ապրեսեանց.

Ներսիսեան դպրոցի **ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՑ** մէկը, առաջիկայ ուսումնական տարուայ շրջանում, կամենում է **ԿՐԿՆՈՂԱԿԱՆ** (репетиционный) **ԴԱՍԵՐ** ունենալ տների մէջ: Նոյնպէս պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիներ հայոց ուսումնարանների բոլոր դասատնոց համար: Հասցէն հարցնել դպրանոցի տեսչի օդնական՝ պ. Ամիրան Մանդինեանցին:

ԿԱԹՈՂԻԿԷ սուրբ Գէորգ եկեղեցու **ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ** հոգաբարձութիւնը յայտնում է սորանով հասարակութեան, որ **Ա-ՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ** կը շարունակվի մինչև հոկտեմբեր ամսի 1-ը: 3—10

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ ունէ նախ. դպրոցի 7-րդ մանուպիտական դասատան մրցանակ (դիպլոմ), որ նուէրէ հայ ընտանիքներում **ԴԱՍԵՐ** և պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիք **ՆԵՐՍԻՍԵԱՆ, ԳԱԶԻՆՃԵԱՆ** և **ՑՈՎՆԱՆԵԱՆ** միջնակարգ ուսումնարանների I, II և III դասատնց համար: Հասցէն հարցնել «Մեղու» խմբագրատանը:

5—10

ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏՊԱՐԱՆ, ՈՐ ԿՈՉՈՒԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ» ԱՆՈՒՆՈՎ։ ՏՊԱՐԱՆԸ ԳՏՆՈՒԻ Է ՆՈՐԱՀԱՍՑԷ ՄԱՐՏԻ 1-Ի ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ։ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՍՑԷՆ ԳՏՆՎՈՒՄ Է ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՀԱՍՑԷՆ ՈՒՆԻ ՆԱԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ։ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏՊԱՐԱՆ, ՈՐ ԿՈՉՈՒԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ» ԱՆՈՒՆՈՎ։ ՏՊԱՐԱՆԸ ԳՏՆՈՒԻ Է ՆՈՐԱՀԱՍՑԷ ՄԱՐՏԻ 1-Ի ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՃԱՌՔԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ, ՈՐ ԿՈՉՈՒԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ» ԱՆՈՒՆՈՎ։ ՏՊԱՐԱՆԸ ԳՏՆՎԻ Է ՆՈՐԱՀԱՍՑԷ ՄԱՐՏԻ 1-Ի ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ, ՈՐ ԿՈՉՈՒԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ» ԱՆՈՒՆՈՎ։ ՏՊԱՐԱՆԸ ԳՏՆՎԻ Է ՆՈՐԱՀԱՍՑԷ ՄԱՐՏԻ 1-Ի ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ, ՈՐ ԿՈՉՈՒԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ» ԱՆՈՒՆՈՎ։ ՏՊԱՐԱՆԸ ԳՏՆՎԻ Է ՆՈՐԱՀԱՍՑԷ ՄԱՐՏԻ 1-Ի ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՈՒՄ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՃԱՌՔԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐ ՎԱՃԱՌՔԻ

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՓԱՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ